ԴԱՍԸՆԹԱՑ 3.1

ԱՈՒԴԻՏ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

/քննության խնդիրներ/

ՄԱՐՏ 2020թ.

ԽՆԴԻՐ 1

Ա. Սահմանել աուդիտի ռիսկը և ներկայացնել նրա բաղադրիչները:

(4 միավոր)

Բ. և Գ. հարցերը վերաբերում են ներքո նկարագրված հանգամանքին

Դուք հանդիսանում եք «Խաղալիքների աշխարհ» ՓԲԸ–ի (Կազմակերպություն) 2019 թվականի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի առաջադրանքի մենեջերը: Աուդիտ չանցած շահույթը մինչև հարկումը կազմում է 120 մլն դրամ, հասույթը՝ 860 մլն դրամ, ընդհանուր ակտիվները՝ 2,200 մլն դրամ: Կազմակերպության ղեկավարության տարեկան պարգևավճարները հաշվարկվում են աուդիտ անցած «Շահույթ հարկումից հետո» ցուցանիշի հիման վրա:

Կազմակերպությունը զբաղվում է խաղալիքների արտադրությամբ և վաճառքով: Վաճառքը կազմակերպվում է ինչպես ավանդական խանութների միջոցով, այնպես էլ միջնորդավորված, էլեկտրոնային խանութների միջոցով: Քանի որ էլեկտրոնային խանութների միջոցով վաճառքի կազմակերպումը հանգեցրել է հասույթի նշանակալի աճի՝ 2019թ. -ին 35 տոկոս, ապա կազմակերպությունը 2019 թվականին սկսել է իր ինտերնետային կայքով էլեկտրոնային առևտրի հարթակի մշակումը: Կազմակերպությունում նաև աճել է էլեկտրոնային առևտրի միջոցով վաճառված խաղալիքների հետվերադարձի հարաբերակցությունը: Էլեկտրոնային հարթակի մշակման ծախսումները, որոնք կապիտալացվել են որպես ոչ նյութական ակտիվ, 2019թ. -ին կազմում են 160 մլն դրամ: Այս պահին ֆինանսական տնօրենը ցանկանում է նաև ստանալ հարկային խորհրդատվություն՝ կապված էլեկտրոնային հարթակի միջոցով կատարվելիք վաճառքների հարկման հետ: Այդ նպատակով դիմել է Ձեզ նոր առաջադրանքի հնարավորության քննարկման նպատակով:

2019 թվականի ընթացքում կազմակերպությունը վերանայել է իր սարքավորումների օգտակար ծառայության ժամկետները՝ 5-ից 7 տարի՝ համարելով, որ նախկինում որոշված օգտակար ծառայության ժամկետը սխալ էր ընտրված, և սարքավորումները ավելի երկար կծառայեն:

2019 թվականի ընթացքում կազմակերպությունը բարձրացրել է իր 5 խոշոր գնորդների կրեդիտի սահմանաչափերը, ինչպես նաև երկարացրել է մնացած գնորդների (բացառությամբ էլեկտրոնային գնումներ կատարող գնորդների) պարտքերի մարման ժամկետները: Արդյունքում գրանցվել է 5 տոկոս հասույթի աճ:

2019 թվականին կազմակերպությունը էլեկտրոնային առևտրի կազմակերպումը իրականացնող իր բաժնի աշխատակիցներին խոստացել է տարեկան պարգևատրում՝ նախորդ տարվա էլեկտրոնային առևտի համախառն շրջանառության 0.5 տոկոսի չափով:

Կազմակերպության ամենախոշոր դեբիտորներից մեկը Իտալիայում (Միլան) գործող ընկերություն է: 2020թ. -ի գարնանը կորոնավիրուսի համաճարակի հետ կապված՝ ընկերության վաճառքները շեշտակի ընկել են, և ընկերությունը չի կարողանում վճարել իր պարտավորությունը կազմակերպության հանդեպ: Կազմակերպության ֆինանսական տնօրենը կապ է հաստատել իտալական ընկերության ներկայացուցչի հետ, որը վկայակոչել է պայմանագրում առկա ֆորս մաժորի վերաբերյալ դրույթը և հայտնել է, որ առայժմ անհնար է կանխատեսել պարտավորության վերադարձելիության հարցը:

Կազմակերպությունը նախատեսում է ստանալ իրավաբանական խորհրդատվություն նշված հարցի լուծման կապակցությամբ, ինչպես նաև առհասարակ եվրոպական երկրներում գրանցված իրենց գնորդների հետ կնքված պայմանագրերում ներառված ֆորս մաժորի վերաբերյալ դրույթի մասով:

Քանի որ կազմակերպության ֆինանսական տնօրենը մարտի վերջին տասնօրյակում մեկնում է ամենամյա արձակուրդի, նա ցանկանում է աուդիտը ավարտել նախքան մարտի 10-ը:

2020 թվականի հունվարի 7-ի դրությամբ կազմակերպությունը պարտք է աուդիտորական ծառայությունների վարձավճարի 30 տոկոսը և ֆինանսական տնօրենը ցանկանում է քննարկել վարձավճարի մարման ժամկետների հետաձգման հարցը: Ինչպես նաև, ֆինանսական տնօրենը ցանկանում է առաջարկել 2019 թվականի ծառայությունների վարձավճարը սահմանել կախված «Շահույթ մինչև հարկում» ցուցանիշից:

Բ. Նկարագրել «Խաղալիքների աշխարհ» ՓԲԸ-ի աուդիտի պլանավորման փուլում աուդիտի ութ ռիսկ և այդ ռիսկերին արձագանք (պատասխանը ներկայացնել երկու սյունով, վերնագրելով՝ Աուդիտի ռիսկ և ռիսկին արձագանք):

(16 միավոր)

Գ. Նկարագրել «Խաղալիքների աշխարհ» ՓԲԸ-ի աուդիտի գծով աուդիտորի անկախությունը վտանգող չորս ռիսկ, և ամեն ռիսկի համար առաջարկել այն մեղմացնող հնարավոր միջոցառումներ (պատասխանը ներկայացնել երկու սյունով, վերնագրելով՝ Անկախության ռիսկ և Մեղմացնող հանգամանք):

(10 միավոր)
Ընդամենը 30 միավոր

ԽՆԴԻՐ 2

«ԱրմԲիզ» ԲԲԸ–ն (Կազմակերպություն) զբաղվում է կահույքի արտադրությամբ, որը վաճառվում է ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան շուկայում: Ընկերության բաժնետոմսերը ցուցակված են Հայաստանի ֆոնդային բորսայում: 2019 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա շահույթը մինչև հարկումը կազմում է 85 մլն դրամ, ընդհանուր ակտիվները՝ 120 մլն դրամ: Դուք հանդիսանում է 2019 թվականի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի խմբի ղեկավարը և այս պահին պլանավորում եք աուդիտի թիմի կողմից կատարվելիք աշխատանքը և պատրաստում եք աուդիտի ծրագրերը՝ քննարկելով հետևյալ հարցերը աուդիտի մենջերի հետ:

Առևտրային կրեդիտորական պարտավորություններ

Կազմակերպությունը հումքը ներմուծում է Ռուսաստանից, Իրանից և ինչպես նաև եվրոպական մի շարք երկրներից: Ներմուծումները կատարվում են CIF[1] Ինկոտերմ 2010-ի հիման վրա: Կազմակերպությունը կրեդիտորական պարտավորությունները ճանաչում է այն պահին, երբ հումքը մուտքագրվում է մաքսային պահեստ:

Բանկային օվերդրաֆտ և ավանդներ

Կազմակերպությունը ունի բանկային օվերդրաֆտ՝ 5 մլն դրամի չափով, որը կապված է կազմակերպության ընթացիկ հաշվի հետ: Ի լրումն՝ կազմակերպությունը նաև ունի ավանդային հաշիվներ: Ավանդային հաշիվները դասակարգված են որպես դրամական միջոցներ և դրանց համարժեքներ:

ՀՀ ՊԵԿ–ում միասնական հաշիվ

Կազմակերպությունը հաշվետու ամսաթվի դրությամբ միասնական հաշվին ունի 8 մլն դրամ գումար:

Առանցքային ղեկավարության անդամների հատուցումներ

Կազմակերպությունն ունի ղեկավարության 5 առանցքային անդամ: Վերջիններս ստանում են ֆիքսված ամսական աշխատավարձ, վաստակում են տարեկան 24 աշխատանքային օր արձակուրդ և տարեկան պարգևատրում՝ կախված կազմակերպության արդյունքներից:

Ա. Թվարկել և նկարագրել առևտրային կրեդիտորական պարտավորությունների գծով ըստ էության չորս թեստ, որոնք պետք է կատարվեն աուդիտի շրջանակում՝ նշելով թեստի ամբողջական բնույթը և ծավալը: (4 միավոր)

Բ. Թվարկել և նկարագրել բանկային օվերդրաֆտի և ավանդների գծով ըստ էության հինգ թեստ, որոնք պետք է կատարվեն աուդիտի շրջանակում՝ նշելով թեստի ամբողջական բնույթը և ծավալը:

(5 միավոր)

Գ. Թվարկել և նկարագրել ՀՀ ՊԵԿ–ում միասնական հաշիվի գծով ըստ էության երեք թեստ, որոնք պետք է կատարվեն աուդիտի շրջանակում՝ նշելով թեստի ամբողջական բնույթը և ծավալը:

(3 միավոր)

Դ. Թվարկել և նկարագրել առանցքային ղեկավարության անդամների հատուցումների գծով ըստ էության երեք թեստ, որոնք պետք է կատարվեն աուդիտի շրջանակում՝ նշելով թեստի ամբողջական բնույթը և ծավալը: (3 միավոր)

Ե. Նկարագրել աուդիտի առանցքային հարցերի էությունը, ինչպես է աուդիտորը այն որոշում և ինչպես է հաղորդակցում/ներկայացնում: (5 միավոր)

Ընդամենը 20 միավոր

ԽՆԴԻՐ 3

[1] Cost, Insurance and Freight

«Էական խեղաթյուրումների ռիսկերի հայտնաբերումն ու գնահատումը՝ կազմակերպության և դրա միջավայրի վերաբերյալ պատկերացումների միջոցով» ԱՄՍ 315-ի համաձայն՝ աուդիտորից պահանջվում է պատկերացում ձեռք բերել այն հսկողության գործընթացների վերաբերյալ, որոնք տեղին են ֆինանսական հաշվետվությունների աուդիտի առաջադրանքի համար։

Հսկողության գործընթացները այն քաղաքականություններն ու ընթացակարգերն են, որոնք օգնում են հավաստիանալ, որ ղեկավարության հրահանգները կկատարվեն։

Ա. Նկարագրել չորս հսկողության գործընթաց, յուրաքանչյուրի համար ներկայացնելով հսկողության գործընթացի օրինակ, որը կազմակերպությունը կարող է ներդնել։

(4 միավոր)

<u>Բ հարցը վերաբերում է ներքոշարադրյալ հանգամանքին.</u>

«Լյուքս Սաք» ՓԲԸ–ն (Կազմակերպություն) զբաղվում է կանացի պայուսակների և աքսեսուարների մեծածախ վաճառքով։ Արտադրությունը կազմակերպվում է 3 արտադրամասերի միջոցով։ Կազմակերպությունն ունի 2 պահեստ։ Դուք հանդիսանում եք աուդիտի առաջադրանքի խմբի ղեկավարը և աուդիտի մենեջերի հետ քննարկում եք հսկողության գործընթացների հետ կապված հետևյալ հարցերը.

Կազմակերպության նորանշանակ գլխավոր հաշվապահը հայտնել է, որ հաշվապահության ծառայության գերծանրաբեռնվածության պատճառով նա չի կարողացել ավարտին հասցնել հիմնական միջոցների անալիտիկ ցանկերի և սինթետիկ մնացորդների համադրումը։ Նման համադրում երբևէ չի կատարվել կազմակերպությունում։

2019 թվականի ընթացքում կազմակերպության ծավալները մեծապես ավելացել են, ինչը հանգեցրել է որոշակի վարչական գործառույթների վերակազմակերպումների։ Դրանցից մեկը վերաբերում է կադրերի բաժնի գործառույթներին։ Քանի որ մեծ քանակով նոր աշխատակիցներ են ընդունվել, ապա կադրերի բաժինը չի կարողացել ողջ ծավալով իրականացնել նոր աշխատակիցների ընդունման գործառույթը։ Այդ գործառույթը մասամբ իր վրա է վերցրել հաշվապահության ծառայությունը։ Հաշվապահության աշխատակիցը իրականացրել է նոր աշխատակցի տվյալների մուտքագրում համակարգ, ինչպես նաև ներկայիս աշխատակիցների դրույքի վերանայում՝ կադրերի բաժնի ղեկավարի էլեկտրոնային նամակի հիման վրա։

Այս պահին կազմակերպությունում զուգահեռաբար շահագործվում է վաճառքների երկու ծրագիր՝ հին և նոր։ Հին ծրագիրը այլևս չի շահագործվի, երբ կավարտվի նոր ծրագրի թեստավորումը։ Իրացման բաժնի կողմից նոր գնորդների պարտքային ռիսկն ամբողջապես ստուգվում է, նրանց տրամադրվում է կրեդիտ, որը հաստատվում է իրացման բաժնի ղեկավարի կողմից։ Կրեդիտները մուտքագրվում են նոր համակարգ և մնում են հաստատուն համակարգում։

Սովորաբար, պաշարների գույքագրումը կազմակերպության 2 պահեստներում կատարվում են ամսական կտրվածքով։ Սակայն վերջին 3 ամիսների ընթացքում գույքագրման աշխատանքներ տեղի չեն ունեցել, քանի որ կատարվում են գործառույթների վերակազմակերպում։

Կազմակերպության բանկային հաշվի մնացորդի համադրումները կատարվում են հաշվապահության ծառայության այն աշխատակցի կողմից, որը կատարում է բանկային փոխանցումներ։

Ընկերության գնումները մեկնարկում են գնման պահանջագրի հաստատումից հետո: Սակայն վերջին ամիսներին գնումների կազմակերպումը սկսվել է կատարվել առանց հաստատված գնման պահանջագրի՝ հաշվի առնելով գնումների գործընթացի վերակազմակերպումները:

Ընկերության ղեկավար անձիք հաճախ մեկնում են գործուղումների՝ մասնակցելու մասնագիտական ցուցահանդեսներին: Գործուղումից վերադառնալուց հետո անձը պետք է եռօրյա ժամկետում ներկայացնի կատարված ծախսերի վերաբերյալ հաշվետվություն համապատասխան հիմնավորող փաստաթղթերով: Գործուղման հաշվետվության հիման վրա հաշվապահության ծառայությունը կատարում է աշխատակցին վերջնահաշվարկ՝ հաշվի առնելով աշխատակցին կանխավճարված գումարը: Գլխավոր հաշվապահը հայտնել է, որ տարվա ընթացքում շատ են բացակայող գործուղման հաշվետվությունները:

Բ. Թվարկել և նկարագրել հսկողության գործընթացի ութ թերություններ «Լյուքս Սաք» ՓԲԸ-ում և ներկայացնել թերությունների շտկման առաջարկություններ: (պատասխանը ներկայացնել 2 սյունով, վերնագրելով՝ Թերություն և Առաջարկություն):

(16 միավոր)
Ընդամենը 20 միավոր

ԽՆԴԻՐ 4

Ա. Նկարագրել աուդիտորի պարտականությունները, կապված խարդախության և սխալի կանխարգելման և հայտնաբերման հետ։

(5 միավոր)

Բ-ը հարցը վերաբերում է ներքո հանգամանքին.

Դուք հանդիսանում եք «Սթարեքս» ՍՊԸ-ի (Կազմակերպություն) 2019 թվականի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի առաջադրանքի մենեջերը։ «Սթարեքս» ՍՊԸ–ն իր գործունեությունը ծավալում է ՏՏ ոլորտում։ Աուդիտի առաջադրանքը գրեթե ավարտված է, և Դուք վերանայում եք աուդիտի փաթեթը նախքան աուդիտի եզրակացության ստորագրումը։ Շահույթը մինչև հարկումը կազմում է 82 մլն դրամ (նախորդ տարի՝ 112 մլն), ընդհանուր ակտիվները կազմում են 125 մլն դրամ (նախորդ տարի՝ 168 մլն)։ Հետևյալ տեղեկատվությունը Ձեր կարծիքով պահանջում է հավելյալ ուսումնասիրություն։

ՀՀ ՊՆ–ի պատվերով կատարվող ծրագիր

2019 թվականի ընթացքում կազմակերպությունը իրականացրել է ծրագիր ՀՀ ՊՆ–ի համար։ Ծրագրի շրջանակում կազմակերպությունը կատարել է 24 մլն դրամ ընդհանուր հետազոտման ծախսեր։ Աուդիտի թիմին կրճատ նկարագրվել են ծախսերը, սակայն ողջ մանրամասնությունները չեն ներկայացվել, քանի որ ծրագիրը որակվել է որպես պետական գաղտնիք պարունակող։ Կազմակերպությունը նախատեսում է, որ ծրագիրի մշակումը կշարունակվի ևս 3 տարի և կլինի մեծապես շահութաբեր։

Հրդեհ

2019 թվականին կազմակերպության սերվերային մասնաշենքերից մեկում տեղի է ունեցել հրդեհ, որի հետևանքով կազմակերպության գործունեությունը մեծապես տուժել է։ Արդյունքում կազմակերպությունը դադարեցրել է իր գործունեությունը գրեթե 2 ամսով։ Դրանից հետո կազմակերպությունը վերսկսել է իր գործունեությունը, սակայն վերագործարկման աշխատանքները դեռևս շարունակվում են և կշարունակվեն ևս 3 ամվա ընթացքում։ Աուդիտի ընթացակարգերի արդյունքում պարզվել է, որ հարցը ամբողջապես ներկայացված է ֆինանսական հաշվետվություններում, և այն չի հարուցում կասկածներ կազմակերպության անընդհատության հետ կապված։

Վարձակալված գրասենյակային տարածք

Տարեսկզբին Կազմակերպությունը վարձակալել է գրասենյակային տարածք։ Տարեկան վարձավճարը կազմում է 12 մլն դրամ։ Պայմանագիրը կնքվել է 5 տարի ժամկետով։ Կազմակերպությունը վարձակալության վճարները ամսական հիմունքով ճանաչում է ծախս ։

Բ. Նշված յուրաքանչյուր հարցի մասով ներկայացնել այդ հարցի առանձին հետևանքը աուդիտորի եզրակցության վրա և աուդիտորի հետագա գործողությունները։ Միավորները հարցերի միջև բաշխված են հավասարաչափ։

(15 միավոր)
Ընդամենը 20 միավոր

ԽՆԴԻՐ 5

Ձեր կազմակերպությունը ստանձնել է «Բիրտեքս» ՓԲԸ-ի 2019 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որն իրականացնում է քաղաքացիական օբյեկտների շինարարական աշխատանքներ: Որպես աուդիտի խմբի ղեկավար Ձեզ հանձնարարվել է կազմել հասույթի աուդիտի ծրագիրը:

Ա. Ներկայացնել հասույթի հետ կապված ֆինանսական հաշվետվությունների չորս հաստատումներ՝ նկարագրելով դրանց զծով ռիսկի օրինակ:

(4 միավոր)

Բ. Ներկայացնել և նկարագրել հասույթի աուդիտի նպատակով իրականացվող վեց ըստ էության թեստեր՝ նշելով այն հաստատումը, որի համար նախագծված է թեստը:

(6 միավոր)

Ընդամենը 10 միավոր